

Արա Զարգարյան
*Մանուկ Աբեղյանի անվան Գրականության
ինստիտուտի կրթաքաղաքական
Էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2025.1-172

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՆԱԽԱՏԻՊԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ» ՄՈՆՈՍՏԻՔՈՍՈՒՄ

1921 թվականին Եղիշե Չարենցն ավարտում է իր «Տաղարան» շարքը, որում ընդգրկված իր «Հայաստանին» բանաստեղծության մեջ բանաստեղծն առաջին անգամ անդրադառնում է Ներսես Շնորհալու նախատիպին: Շնորհալու անունը Չարենցը իր բանաստեղծություններում հիշատակում է նաև կյանքի վերջին տարիներին՝ «Մոնոստիքոսներ» շարքի «Բանաստեղծներ» ստեղծագործությունում: Այդ գործում Շնորհալին ներկայացվում է որպես մեծագույնը՝ մինչև Չարենցի ժամանակաշրջանը գոյություն ունեցած բոլորից վեր դասված: Վերոնշյալ հանգամանքները ընդգծում են, որ Չարենցը դառնում է Ներսես Շնորհալու բանաստեղծական շնորհի ժառանգորդը: Եվ «աշակերտի» կողմից «ուսուցչին» տրված գնահատականը լինում է հենց գերադրական:

Հիմնաբառեր. Չարենց, Շնորհալի, միջնադար, բանաստեղծություն, ժառանգորդ, հանձարեղ, մոնոստիքոս, նախատիպ:

Ներածություն

1920 թ. Եղիշե Չարենցը Երևանում սկսում և 1921 թ. Մոսկվայում ավարտում է իր «Տաղարան» բանաստեղծությունների ժողովածուն: Հենց վերնագրով Չարենցն ընդգծում և հղում է կատարում բանաստեղծական հնագույն ձևերից մեկին՝ տաղին: Երգվող ոտանավորի (Մալխասյանց, 1945) առաջին

օրինակները հայ գրականության մեջ տվել է Գրիգոր Նարեկացին: «Տաղարան»-ում առկա է միջնադարյան հայ բանաստեղծության ոճը: Թեև շարքում միշտ կա Սայաթ-Նովայի շունչն ու անունը, այնուամենայնիվ միջնադարյան այլ բանաստեղծ-նախատիպերի անվան հիշատակություն ևս կա: Շարքի վերջին երկու ստեղծագործություններում՝ «Հայաստանին» (Չարենց Ե., 1962) և «Ես իմ անուշ Հայաստանի» (Չարենց Ե., 1962) գործերում Չարենցը հիշատակում է միջնադարյան հայ բանաստեղծներ Գրիգոր Նարեկացու, Նաղաշ Հովնաթանի, Նահապետ Քուչակի և Ներսես Շնորհալու անտունները: Ներսես Շնորհալու նախատիպի հիշատակումը Չարենցի ստեղծագործություններում հանդիպում ենք քիչ, սակայն նրան տրվող գնահատականները միշտ ուրույն են: Ինչն էլ դրդում է քննել այդ ստեղծագործությունները:

Մեթոդ

Ուսումնասիրությունը կատարելիս կիրառվել է հիմնականում պատմա-համեմատական մեթոդը: Հոդվածում ընդգծվում է նաև տվյալ ստեղծագործական շրջանին բնորոշ Չարենցի գնահատականը:

Արդյունքներ և քննարկում

Ներսես Շնորհալու նախատիպի մասին Չարենցն առաջին անգամ գրում է «Հայաստանին» բանաստեղծության մեջ.

«Նարեկացի, **Շնորհալի**, Նաղաշ Հովնաթան –
Ինչքան հանճար, խելք ես տեսել – էլի՛ կտեսնես» (Չարենց, 1962):

Չարենցն այստեղ հատկապես ընդգծում է Ներսես Շնորհալու հանճարը: Շնորհալու ստեղծագործական բացառիկության մասին է խոսել դեռևս Ներսես Լամբրոնացին, ով ևս ընդգծել է Շնորհալու բանաստեղծական ձիրքն ու տաղանդը.

«Հոմերական տաղից չափող,
Ոտանաւոր տառից գըտող» (Շնորհալի, 1987):

Եղիշե Չարենցը «Տաղարան»-ում պահպանում է Շնորհալու բանաստեղծական ավանդույթը: Շնորհալին իր հերթին առավել հայտնի էր հենց տաղերով: Եթե համեմատականներ ենք տանում, ապա Ներսես Շնորհալու թողած ստեղծագործական ժառանգությունում կան քիչ գանձեր, ինչը չենք կարող ասել Գրիգոր Նարեկացու դեպքում, ում ստեղծագործական ժառանգությունում գանձերի թիվը հասնում է մոտ մեկ տասնյակի (Մատենագիրք, 2018): Նարեկացին դարձավ գանձարանային բանաստեղծական ձևի սկզբնավորողը, ում շարունակեց Շնորհալին: Ներսես Շնորհալին իր հերթին շարունակեց տաղի ավանդույթը ու այն զարգացնելով բերեց ավարտուն տեսքի: Այդ իսկ պատճառով Շնորհալին առավել ամուր կապված է հենց գանձարանային տաղերի հետ: Նրա թողած ստեղծագործական ժառանգությունում տաղերի թիվը հասնում է մոտ հարյուրի: Դրանով Շնորհալին դարձավ տաղարանների կազ-

մավորման, ավանդույթների պահպանման ու զարգացման գործում ամենաերևելիներից մեկը: Այս համատեքստում Եղիշե Չարենցի «Տաղարան»-ում Սայաթ-Նովայից զատ ուղղակիորեն հղում է նաև Ներսես Շնորհալու տաղարանային արվեստին: «Հայաստանին» և «Ես իմ անուշ Հայաստանի» ստեղծագործություններում Չարենցն ընդգծում է միջնադարյան չորս ստեղծագործողների (Չարենց, 1962), որոնց գրական ժառանգությունում ամկա է տաղը: «Տաղարան»-ը սկսվում է Սայաթ-Նովայի նախատիպով և ավարտվում միջնադարյան չորս տաղերգուների անվան հիշատակությամբ: Այստեղ չորս տաղերգուները փակում են «Տաղարան»-ում ամկա տաղի գաղափարական համակարգը: Չարենցը հիշելով անցյալը, խոսում է նաև իր, ներկայի և ապագայի մասին: Այս կետում կազմվում է տաղերգուների ավանդույթ՝ Նարեկացի-Շնորհալի-Չարենց եռամիասնական համակարգով: Այս համակարգը Չարենցի պոեզիայում ևս մեկ անգամ տեսնելու ենք արդեն կյանքի մայրամուտին:

Խոսելով Շնորհալու նախատիպի մասին՝ հարկ է նշել, որ Եղիշե Չարենցի անձնական գրադարանում Ներսես Շնորհալուց կա պահպանված միայն մեկ գիրք՝ Ներսես Շնորհալի «Յիսուս Որդի» (Մատենագիտություն, 2022): Գրքի այդ օրինակը տպագրվել է Սանկտ Պետերբուրգում, 1785 թվականին, Գրիգոր Խալդարյանցի տպարանում: Գրքի շապիկի դարձերեսին մատիտով արված ռուսերեն գրառումներ կան, որոնք Չարենցը չի արել: Գրառումները անընթեռնելի են, միայն հստակ է, որ արվել են 1873 թ.: Քանի որ Չարենցի անձնական գրադարանը ամբողջությամբ չի պահպանվել, ուստի պետք է նաև չբացառել, որ նա ունեցել է Ներսես Շնորհալուց այլ գրքեր ևս:

Այս դեպքում մեզ համար հիմք են ծառայում միայն մի քանի ստեղծագործություններ, որոնցով կարող ենք հասկանալ Շնորհալու նախատիպի ընկալումը Չարենցի գաղափարական համակարգում: Քննվող բանաստեղծությունում Շնորհալին կանգնում է Նարեկացու կողքին: Հանձարների ավանդույթը շարունակվում է, ու Չարենցը ցույց տալով հնագույն ավանդույթը, իրեն համարում է բանաստեղծական հանձարի ժառանգորդը:

«Քո Չարենցին լեզու տվող երկիր Հայաստան,
Հազար ու մի երգ ես տեսել – էլի՛ կտեսնես» (Չարենց, 1962):

Շնորհալին Չարենցի ընկալման մեջ դառնում է միջնադարյան հանձարեղայն գիծը, որը գալիս է անցյալից ու դառնում հիմք իր համար, որով դրսևորվում է նոր ժամանակների հայ բանաստեղծությունը:

Միջնադարյան հայ ստեղծագործողների՝ Նարեկացու, Շնորհալու և այլոց մասին Չարենցը գրում է իր կյանքի վերջին տարիներին ևս: 1937 թ. Չարենցը գրում է պոեմ միջնադարյան բանաստեղծ-երաժիշտ Գրիգոր Խալթեցու մասին: Պոեմում Չարենցը պատկերում է Խալթեցու կյանքի վերջին օրերն ու նահատակությունը: Ավարտուն, սակայն ոչ ամբողջությամբ պահպանված պոեմի ձեռագրում մի շատ կարևոր գրառում է կատարել բանաստեղծը, որին անդրադարձել է Անահիտ Չարենցը. «Խալթեցու «Հիշատակարան աղետից»-ում նշվում է իբրև այն տարին, երբ տեղի ունեցավ արևի խավարումը: Հավանաբար, հենց այս՝ 1386 թ. է նկատի ունեցել Չարենցը, երբ կատարել է

հետևյալ նշումը՝ «1937-1836=551, 1386+551=1937 թիվ» (Չարենց Ե., 1983): Խլաթեցու աշխատության հիշատակմամբ, արևի խավարման թվականի ընդգծմամբ և միջնադարյան հայ բանաստեղծի կյանքի վերջին օրերի նկարագրությամբ Չարենցը տալիս է Չարենց-Խլաթեցի, արևի խավարում (1386)-Չարենցի մահ (1937) համեմատական զուգահեռները: Չարենցն ինքն իրեն տեսնում էր որպես արև, և նոր ժամանակների արևի խավարումը հենց իր կյանքի ավարտն էր: Կյանքի վերջին տարիներին և հատկապես 1937 թ. Չարենցը մի շարք հարցերի պատասխանները փորձում էր ստանալ անցյալում: Դեպի անցյալ ճանապարհորդության մեջ միջնադարն ու միջնադարում ապրած հայ հեղինակները ունեին իրենց ուրույն դիրքը: Շատ հարցերի պատասխաններ հենց նրանց կյանքն ու գրական ստեղծագործություններն էին տալու: Արդիական հարցերի քննման համար օգնում էին նաև այդ մտածողները: Եվ պատահականությամբ չէին Չարենցի գրույցները Գրիգոր Նարեկացու շուրթերով և բնագրային զուգահեռներով: Այստեղ հարկ է հիշել «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապոստիքները (Չարենց, 1983): Հինգ տոնետներում Չարենցն իրեն նույնացնում է Նարեկացու կերպարի հետ և սկսվում է սրտի խորքից գրույցն Աստծո հետ: Նույն թվականին Չարենցը գրում է մոնոստիքոսների մի շարք, որտեղ արդեն իսկ «վերածնվում է» «Տաղարան»-ում առաջ քաշված գաղափարը, Ներսես Շնորհալու նախատիպը: Դա տեղի է ունենում 16-17 տարի անց, երբ ավելի հասուն տարիքում Չարենցի մոտ Շնորհալու ընկալումը գեղարվեստական ու գաղափարական հաստատուն իմաստ է ստանում:

Չարենցը հերթական անգամ ցույց է տալիս հայ բանաստեղծական հանձարի ավանդույթը, սակայն եթե նախորդ՝ «Հայաստանին» բանաստեղծության դեպքում շղթան գնում էր մինչև Նարեկացի, Շնորհալի, ապա այս դեպքում ժամանակը սահում է ավելի հետ՝ մինչև Գողթան երգիչներ: Բանաստեղծական հանձարի շղթան ընթանում է դեպի հայ պոեզիայի մեզ հայտնի նախահիմք և առաջ շարժվում դեպի Չարենցի ժամանակը: Երկրորդ շարքի «Բանաստեղծներ» ենթավերնագրի տակ կա հինգ մոնոստիքոս: Դրանք ինչպես անկախ, այնպես էլ բանաստեղծական շարքի գաղափարախոսությամբ շարժվող միասնական բանաստեղծություններ են: Հռոմեական թվանշաններով թվագրված շարքում նախ Չարենցն ընդգծում է մեր հնագույն բանաստեղծներին՝ Գողթան երգիչներին.

«I Մեր ռապսոդներն էին հին նախ՝ նրանք, գողթան չքնաղ երգիչները....» (Չարենց, 1983):

«Հայաստանին» բանաստեղծության մեջ ժամանակը տարվում էր դեպի միջնադար՝ Նարեկացի-Շնորհալի, իսկ այստեղ ժամանակը ընթանում է դեպի նախաքրիստոնեական ժամանակաշրջան՝ հասնելով Գողթան երգիչներին: Հաջորդ երկու մոնոստիքոսների հիմքում Նարեկացին և Շնորհալին են: Այս մոնոստիքոսները կընդգծենք միասին, որում գաղափարական նմանությունից զատ կա նաև հակադրություն.

«II Ո՞ւմ անվանեմ ես ապա,– եթե ոչ – քեզ միակըդ, մեծըդ **Նարեկ...**»

I II Ո՛չ. Մեծերից մեծագույնը,– օ, դու, ինքդ ես, անմահ **Շնորհալի.....**» (Չարենց, 1983):

Բանաստեղծական ժառանգականության շղթան լուսաբանված է Սեյրան Գրիգորյանի՝ Չարենցի մոնոստիքոսների մասին մի հոդվածում (Գրիգորյան, 2021). «....Չարենցի շարքը անտիկ բանաստեղծին ավելի հոգեհարազատ կայսրերի կերպավորման փոխարեն դնում է իր բանաստեղծական «արքաների» հերթագայությունը՝ կազմելով Գողթան երգիչներ-Նարեկացի-Շնորհալի-Չարենց շղթան: Այս դեպքում ևս գործում է իշխանության փոխանցման ժառանգորդական սկզբունքը....» (Գրիգորյան, 2021):

Բանաստեղծական ժառանգականության աստիճանավորմամբ ստացվում է, որ նախահիմք հանդիսացող Գողթան երգիչներից բանաստեղծական հանձարը ժառանգեց Նարեկացին: Չարենցը մոնոստիքոսում Նարեկացուն անվանում է «միակ» և «մեծ»: Չարենցի ստեղծագործական ժառանգության մեջ Նարեկացու բացառիկության մասին են փաստում բանաստեղծի ստեղծագործությունները, որոնց անդրադարձել ենք վերը: Նարեկացու անվան կողքին Չարենցը հիշատակում է Ներսես Շնորհալուն՝ առանձին մոնոստիքոսով: Թեև մոնոստիքոսների շարքում Նարեկացին և Շնորհալին հանդես են գալիս առանձին գործերում, սակայն ինչպես «Հայաստանին» բանաստեղծության դեպքում էր, երկու հեղինակները դարձյալ կողք կողքի են: Եթե նախորդ ստեղծագործության մեջ Չարենցը Նարեկացուն և Շնորհալուն կողք կողքի դնելով՝ նրանց հանձարի նույն դիտանկյունով էր չափում, ապա այս դեպքում՝ 16-17 տարի անց Շնորհալին Նարեկացու համեմատ մի փոքր առավելություն է ստանում: Նարեկացուն տրվում է «միակ» և «մեծ» գնահատականը: Շարքի հաջորդ մոնոստիքոսում Չարենցը ընդգծում է Նարեկացուց ստացած Շնորհալու բանաստեղծական ժառանգությունը և ընդգծում, որ նա գերազանցում է Նարեկացուն:

«Ո՛չ. **Մեծերից մեծագույնը**,– օ, դու ինքդ ես, անմահ **Շնորհալի.....**» (Չարենց, 1983):

Շնորհալին այս մոնոստիքոսում և՛ Նարեկացու կողքին է, և՛ դառնում է մինչև Չարենցի ժամանակը եղած մեծագույնը: Չենք կարող միանշանակ պնդել, որ Չարենցի գնահատմամբ Ներսես Շնորհալին հայ իրականության ամենամեծ բանաստեղծն էր, սակայն տեսնում ենք Շնորհալուն տված Չարենցի նուրբ գնահատականը: Առկա է նաև Նարեկացուն հավասար լինելու փաստը, որը բխում է դեռևս «Տաղարան» շարքի ժամանակից: Այս մոնոստիքոսների շարքում Չարենցը շարունակում է բանաստեղծական ժառանգության շղթան և հասնում իրեն:

«IV Անձ ես դու մի առանձին, – ժողովրդին ես համայն, միևնույն է» (Չարենց, 1983):

Չարենցը բանաստեղծական իր ժառանգությունը ստանում է Ներսես Շնորհալուց: Այլ ձևակերպմամբ՝ Չարենցը իրեն նախորդող բանաստեղծներ-

րի շղթան հասցնում է մինչև Ներսես Շնորհալի՝ 12-րդ դար: Այս մոնոստիքոսը փաստում է, որ հայոց բանաստեղծական շնորհը սկսվում է Գողթան երգիչներից, իսկ Զարենցն այդ շնորհը ժառանգում է հենց Ներսես Շնորհալուց: **Գողթան երգիչներ-Նարեկացի-Շնորհալի-Զարենց:**

Եզրակացություն

Շնորհալու նախատիպը Զարենցի գնահատմամբ բացառիկ է, այս մոնոստիքոսի համատեքստում Շնորհալին անգամ մեծագույնն է՝ հայ բանաստեղծության սկզբնական շրջանից մինչև Զարենցի ժամանակը: Շնորհալուն տրված բացառիկ գնահատականը առկա է դեռևս «Տաղարան» շարքում, որում առաջին անգամ հիշատակվում է Ներսես Շնորհալու նախատիպն ու ստանում «հանձարեղ» բնորոշումը: Կյանքի մայրամուտին՝ 1937 թվականին Զարենցի պոեզիայում դարձյալ վերածնվում է Ներսես Շնորհալու անունն ու շարունակում տաղարանից եկած ավանդույթը: Այս դեպքում ևս Նարեկացի-Շնորհալի «բանաստեղծական զույգը» հանդես է գալիս միասին: Սակայն մոնոստիքոսում նախ ընդգծվում է բանաստեղծական ժառանգականությունը՝ ցույց է տրվում այսպես կոչված «արքայական ժառանգականության» շղթան, հետո բանաստեղծը վերանայում է իր կարծիքը՝ և հայ բանաստեղծության բուրգի գազաթին ընդգծվում է Ներսես Շնորհալու բացառիկությունը՝ որպես «մեծերից մեծագույնի»: Հասուն տարիքում Եղիշե Զարենցը հաստատում է Ներսես Շնորհալու՝ որպես իր նախատիպի գնահատականը: Զարենցն իրեն համարում է Շնորհալու պոեզիայի ժառանգորդը: Այս կետում Զարենցը գուցե նկատի ուներ և՛ հանձարը, և՛ ստեղծագործական բազմազանությունն ու բազմաշնորհ լինելը: Քանի որ Զարենցը և Ներսես Շնորհալին աչքի են ընկել ստեղծագործական բազմազանությամբ, մի շարք ժանրերով ստեղծագործելու տաղանդով, գրական-գեղարվեստական նորարարությամբ, ինչպես նաև հայ բանաստեղծությունը զարգացնելու և նոր ուղի հարթելու կարողությամբ: Վերոնշյալ հանգամանքները ընդգծում են, որ Զարենցը դառնում է Ներսես Շնորհալու բանաստեղծական շնորհի ժառանգորդը: Եվ «աշակերտի» կողմից «ուսուցչին» տրված գնահատականը հենց գերադրական է:

Օգտագործված գրականության ցանկ

- Մալենագիրք հայոց, ԻԱ հատոր*, (2018): Մատենադարանի հրատ., Երևան:
Մալխասյանց, Ստ. (1945): *Հայերեն բացադրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան:
Մատենագիտություն, (2022), Եղիշե Զարենցի անձնական գրադարանը, *Ե. Զարենցի փուն-թանգարանի հրատ.*, Երևան:
Շնորհալի, Ն. (1987): *Տաղեր և զանձեր*, ՀՍՍՀ ԳԱՀ հրատ., Երևան:

1* Մինչ այս մոնոստիքոսը գրելը Եղիշե Զարենցը իր ստեղծագործություններում միջնադարյան բանաստեղծների ցանկում նշում է Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի (Տե՛ս՝ Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 245-24, Զարենց Ե., Անտիպ և չհավաքված երկեր, Եր., 1983, էջ 115:), Գրիգոր Խլաթեցու (Ե. Զարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1983, էջ 660), և այլոց անունները: Սակայն այս մոնոստիքոսների շարքում Զարենցը միջնադարյան բանաստեղծների ցանկում հիշատակում է միայն Նարեկացուն և Շնորհալուն:

Չարենց, Ե. (1983): *Անդիպ և չհավաքված երկեր*, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., , Երևան:
Չարենց, Ե. (1962): *Երկերի ժողովածու*, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., , Երևան:
Գրիգորյան, Ս. (2021): Եղիշե Չարենցի մոնոստիքոսները, ԲԵՀ. *Բանասիրություն*, Երևան:

Արա Չարգարյան

*Младший научный сотрудник Института
литературы имени Манука Абесяна
Эл. адрес: zargaryanara1994@gmail.com*

ЧТЕНИЕ ПРОТОТИПА НЕРСЕСА ШНОРАЛИ В МОНОСТИХЕ «ПОЕТЫ» ЕГИШЕ ЧАРЕНЦА

В 1921 году Егише Чаренц завершает серию «Тагаран» («Песенник»), в которой поэт впервые обращается к прототипу Нерсеса Шнорали в стихотворении «Айастанин» («К Армении»). В последние годы жизни Чаренц также упоминает имя Шнорали в произведениях, написанных под подзаголовком «Поэты» серии «Моностихов». В этих произведениях Шнорали получает звание величайшего писателя до эпохи Чаренца. Здесь Чаренц подчеркивает его гениальность. Вышеуказанное демонстрирует как Чаренц становится наследником поэтического дара Нерсеса Шнорали. И оценка, которую дает «ученик» своему «учителю», очень высокая. По мнению Чаренца, прототип Шнорали исключителен, в контексте этого моностиха Шнорали является даже величайшим от начала армянской поэзии до времен Чаренца. Исключительная оценка, данная Шноралу, присутствует и сейчас в серии «Тагаран», в которой впервые упоминается прототип Нерсеса Шноралу и описывается как «гений». На закате жизни, в 1937 году, близ Чаренца, имя Нерсеса Шнорали вновь возрождается и продолжает традицию из гробницы. При этом вместе выступает и «поэтическая пара» Нарекаци-Шнорал. Однако в моностикосе сначала подчеркивается поэтическое наследие – показывается цепочка так называемого «царского наследства», затем поэт пересматривает свое мнение и подчеркивается уникальность Нерсеса Шноралу как «величайшего из великих» – вершина пирамиды армянской поэзии. Став взрослым, Егише Чаренц подтверждает оценку Нерсеса Шнорали как своего прототипа. Чаренц считает себя наследником поэзии Шноралу. Здесь Чаренц, возможно, имел в виду как гениальность, так и творческое разнообразие и многогранность. Потому что Чаренц и Нерсес Шнорали отличались творческим разнообразием, талантом к творчеству в ряде жанров, литературным и художественным новаторством, а также способностью развивать армянскую поэзию и прокладывать новый путь. Вышеуказанные обстоятельства подчеркивают, что Чаренц становится наследником поэтического дара Нерсеса Шнорали. И оценка, которую дает «ученик» «учителю», превосходная.

Ключевые слова: Чаренц, Шнорали, средневековье, поэзия, наследник, гений, моностих, прототип.

Ara Zargaryan

Junior researcher of the Institute of Literature after Manuk Abeghyan

Email: zargaryanara1994@gmail.com

THE READING OF NERSES SHNORHALIS PROTOTYPE IN THE MONOSTICH “POETS” BY YEGHISHE CHARENTS

In 1921, Yeghishe Charents completes his series «Tagharan», in the poem «To Armenia» included in which the poet refers for the first time to the prototype of Nerses Shnorali. In his poems Charents also mentions Shnorali's name in the last years of his life, in the work written under the subtitle «Poets» of the series «Monostich». In that poem, Shnorhali is designated as the greatest mind preceding Charents's time. Here, Charents emphasizes Shnorali's genius and giftedness. The above-mentioned circumstances emphasize that Charents becomes the heir of Nerses Shnorali's poetic gift. And the evaluation given by the «student» to the «teacher» is exceptional. According to Charents, the prototype of Shnorali is exceptional, in the context of this monostich, Shnorali is even the greatest from the beginning of Armenian poetry to the time of Charents. The exceptional assessment given to Shnorali is still present in the "Tagharan" series, in which the prototype of Nerses Shnorali is mentioned for the first time and is described as "genius". At the sunset of life, in 1937, near Charents, the name of Nerses Shnorali is revived again and continues the tradition from the tomb. In this case, the "poetry couple" of Narekatsi-Shnorhali also performs together. However, in the monostich, first the poetic inheritance is emphasized – the chain of the so-called "royal inheritance" is shown, then the poet revises his opinion and the uniqueness of Nerses Shnorali as "the greatest of the greats" is emphasized at the top of the pyramid of Armenian poetry. As an adult, Yeghishe Charents confirms the assessment of Nerses Shnorali as his prototype. Charents considers himself the heir of Shnorali's poetry. At this point, Charents may have meant both genius and creative diversity and multitasking. Because Charents and Nerses Shnorali were distinguished by their creative diversity, their talent for creating in a number of genres, their literary and artistic innovation, as well as their ability to develop Armenian poetry and pave a new path. The above-mentioned circumstances emphasize that Charents becomes the heir of Nerses Shnorali's poetic gift. And the evaluation given by the "student" to the "teacher" is superlative.

Key words: Charents, Shnorhali, middle ages, poem, heir, genius, monostich, prototype.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. հունվարի 15-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. փետրվարի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին: